



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N-45

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարչապետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարչապետի գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2015 թվականի նոյեմբերի 06-ի N-45-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Արրահամյան Նորիկ Մեսրոպի 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

Ընդամենը՝ 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Սարչապետ համայնքի ղեկավարի օգնական՝  Անժելա Մարտիրոսյան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N-46-Ա

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՉ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարչապետ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Անի Պետրոսի Առաքելյանից, Արամ Քերոբի Բարոյանից և Սերոբ Էդիկի Պալաքյանից ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Սարչապետ համայնքի բյուջեի 09.4.1 <Բարձրագույն մասնագիտական կրթություն> /ուսման վարձ/ ծրագրի 4729 հոդվածից 2015-2016թթ ուս. տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձ փոխանցել ՀՊՃՀՊՈԱԿ-ին՝ 114.000/մեկ հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամ՝ Սերոբ Էդիկի Պալաքյանի համար, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ ՊՈԱԿ-ին՝ 125.000/մեկ հարյուր քսանհինգ հազար/ ՀՀ դրամ՝ Արամ Քերոբի Բարոյանի համար և <Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան> ՊՈԱԿ-ին՝ 48.000/քառասունութ հազար/ ՀՀ դրամ՝ Անի Պետրոսի Առաքելյանի համար :

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱԶԱՊԵՏ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄԱՐԴՈՅԱՆ ԼՈՐԻԿ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015թվականի N-47-Ն

ՍԱՐԶԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի
<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԶԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ԹԻՎ 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՍԱՐԶԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սարչապետի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի <Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետի գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեն հաստատելու մասին> թիվ 35-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5

Դեմ -0

Չեղնակա -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱԶԱՊԵՏ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

4. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ

5. ՄԵՈՅՅԱՆ ԶԱՎԵՍ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ